

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ**

***I. Ներածություն***

1. «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 20-րդ հոդվածով որպես սոցիալական աջակցության սկզբունք սահմանվել է նաև համագործակցությունը, մասնավորապես այն հիմնարար նշանակություն ունի ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի գործարկման համար: Սոցիալական համագործակցության ապահովման համար օրենքի 34-րդ, 35-րդ և 36-րդ հոդվածներով սահմանվում են համագործակցության հիմնական դրույթները:

2. Համագործակցության կազմակերպման ընթացակարգերի սահմանման մի շարք լիազորություններ վերապահվել են Հայաստանի Հանրապետության կառավարությանը և սոցիալական աջակցության բնագավառի Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնին՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

***II. Սոցիալական համագործակցության ռազմավարական ուղղությունները և կազմակերպման ձևերը սահմանելու նպատակը***

3. Սոցիալական համագործակցության ռազմավարական ուղղությունները և կազմակերպման ձևերը սահմանելու նպատակը սոցիալական համագործակցության ինստիտուցիոնալացումն է՝ մեծացնելով կառավարման համակարգի արդյունավետությունը և սահմանելով համագործակցության հստակ մեխանիզմներ:

***III. Սոցիալական համագործակցության իրավիճակային վերլուծություն, առկա խնդիրները***

4. Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած սոցիալական քաղաքականության՝ առողջապահություն, կրթություն և սոցիալական պաշտպանություն, բարեփոխումների ուղղություններից մեկն էլ բնակչության սոցիալական խնդիրների լուծման արդյունավետ մեխանիզմների ներդրումն է:

5. Նշված ոլորտներում առկա խնդիրների մի մասի լուծումն ամբողջությամբ ներդրոտային է և նույն համակարգի ներքո դրանք արդյունավետորեն ստանում են իրենց լուծումները:

6. Սակայն ոլորտային բաժանումը պայմանական է, իսկ սոցիալական խնդիրները փոխկապակցված: Եթե քաղաքականության ու օրենսդրության մշակման տեսանկյունից ոլորտային բաժանումը զարգացման խոչընդոտ չէ և հավասարակշռված քաղաքականության մշակման խնդիրները լուծվում են համակարգման գործառույթի կիրառմամբ, ապա սոցիալական ծառայությունների մատուցման մակարդակում, երբ գործ ենք ունենում կոնկրետ անհատների հետ, սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների ոլորտային բաժանումը բերում է օբյեկտիվ սահմանափակումների:

7. Մարդկանց սոցիալական խնդիրներն իրականում բազմաթիվ գործոնների արդյունք են, որոնք շատ հաճախ մեկ առանձին ոլորտի չեն «պատկանում»: Ընդհանուր առմամբ համագործակցության մեխանիզմների բացակայությունը սոցիալական ծառայությունների մատուցման մակարդակում զգալիորեն նվազեցնում է գործընթացի արդյունավետությունը՝ պայմանավորված սոցիալական ծառայության կարիք ունեցողի ուշ հայտնաբերմամբ կամ ընդհանրապես չհայտնաբերմամբ՝ սոցիալական ծառայությունների մատուցման գործընթացը դարձնելով տարանջատ (դիսկրետ), լի կրկնություններով և հակասություններով:

8. Օրինակ, սոցիալական պաշտպանության խնդիրներից մեկը՝ ընտանիքի ծանր սոցիալական վիճակը, կարող է հայտնի դառնալ կամ հայտնաբերվել սոցիալական ոլորտում գործող կառույցներից որևէ մեկի՝ դպրոցի աշխատակազմի կամ բուժաշխատողի կողմից: Համագործակցության հստակ մեխանիզմների բացակայության պայմաններում այդ տեղեկությունը այդպես էլ չի հասնում կամ ուշացած է հասնում սոցիալական պաշտպանության ոլորտի մասնագետին և տրամադրված աջակցությունը լինում է ոչ արդյունավետ՝ այն լուծելու համար ավելի մեծ ջանքեր և ռեսուրսներ են պահանջվում:

9. Սոցիալական ծառայությունների մատուցման գործընթացում առկա խնդիրները կարելի է դասել սոցիալական ծառայությունների մատուցման իներցիոն բնույթի, սոցիալական ծառայությունների մատուցման զուտ ընթացակարգային բնույթի, ենթակառուցվածքային կախվածության և ռեակտիվության (արձագանքող բնույթը):

1) Սոցիալական ծառայությունների մատուցման իներցիոն բնույթ՝ որևէ սոցիալական ծառայության երկար ժամանակահատված մատուցվելու պարագայում չի քննարկվում դրա (վերաբերում է ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական պարտավորություններին) գոյության անհրաժեշտությունը և այն շարունակվում է մատուցվել, չնայած շատ դեպքերում անհրաժեշտ է այն կամ ձևափոխել, կամ նույնիսկ դադարեցնել, քանի որ դրա կարիքը, գուցե, ընդհանրապես չկա:

2) Սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի՝ զուտ ընթացակարգային բնույթ. սոցիալական ծառայությունների ընթացակարգային բնույթը պարտադիր պայման է տվյալ ծառայությունն ըստ համապատասխան ստանդարտների մատուցման համար: Սակայն, այն գրեթե չի անդրադառնում տվյալ ծառայության վերջնական արդյունքներին: Միայն ընթացակարգային ձևի կիրառումը տեղ չի թողնում տվյալ սոցիալական ծառայության՝ ըստ վերջնական արդյունքների գնահատմանը, որը ներառում է ինչպես համապատասխան արդյունքների սահմանումը, այնպես էլ դրանց չափանիշների կիրառումը:

3) Սոցիալական ծառայությունների ենթակառուցվածքային կախվածությամբ պայմանավորված խնդիրներ. Սոցիալական ծառայությունների մատուցման

ձևաչափը հիմնականում ենթադրում է համապատասխան ենթակառուցվածքի առկայություն և, եթե, այն բացակայում է, ապա համարվում է, որ սոցիալական ծառայությունը հնարավոր չէ մատուցել կամ առնվազն պետք է ստեղծել համապատասխան ենթակառուցվածք:

4) Սոցիալական ծառայությունների ռեակտիվությունը՝ արձագանքող բնույթը. սոցիալական ծառայությունները հիմնականում մատուցվում են որպես արձագանք անհատի դիմումին: Եթե անհատը, ինչ որ պատճառով, չի դիմել տվյալ սոցիալական ծառայությունը մատուցող կազմակերպություն, ապա, բնականաբար, նրա խնդիրը մնացել է չլուծված: Սակայն խնդիրն առկա է, և հնարավոր է, որ այն սուր արտահայտված լինի:

10. Խնդիրների այն հատվածը, որն ունի ներուլորտային բնույթ, համապատասխան լուծում է ստանում ոլորտային քաղաքականության համար պատասխանատու նախարարությունների համակարգերի՝ տվյալ դեպքում Հայաստանի Հանրապետության առողջապահության, կրթության և գիտության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների կողմից:

11. Սակայն հիմնախնդիրների մի զգալի մասը միաժամանակ առնչվում են մի քանի ոլորտների, ունեն միջուլորտային բնույթ, ընդ որում դրանք խաչվում են նաև տարածքային և տեղական ինքնակառավարման մակարդակներում:

12. Օրենքի 36-րդ հոդվածը սահմանում է միջգերատեսչական սոցիալական համագործակցության հիմնական կողմերը՝ սոցիալական պաշտպանության ոլորտի տարածքային մարմիններ, առողջապահական և կրթաուսումնական հաստատություններ, ոստիկանություն, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններ:

13. Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների, առողջությունը պայմանավորող գործոնների մեջ առողջապահական համակարգի դերակատարումը չի գերազանցում կարիքների ընդհանուր ծավալի 10-15 տոկոսը: Այլ գործոնների թվում հատկապես կարևորվում են սոցիալ-տնտեսական պայմանները, աղքատությունը, սնունդը, ժառանգականությունը, շրջակա միջավայրը և այլն:

14. Առողջապահության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակում և իրականացնում է ՀՀ ԱՆ-ը: Մարզային և համայնքային մակարդակում առողջության պահպանմանն ուղղված ծրագրերի իրականացման և բուժօգնության կազմակերպման գործընթացի համակարգումն իրականացվում է նաև մարզպետարանների առողջապահության և սոցիալական հարցերի վարչությունների միջոցով: Մարզերի տարածաշրջանների (նախկին վարչական շրջանների) մակարդակում շարունակում է գործել գլխավոր մասնագետների ինստիտուտը, սակայն տարբեր մարզերում այդ համակարգի արդյունավետությունը տարբեր է:

15. Համայնքային մակարդակում առողջապահական կառույցները հիմնականում առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) ծառայություններ մատուցող բժշկական հաստատություններն են՝ 340 բժշկական կազմակերպություններ (ԱԱՊ կենտրոններ, գյուղական առողջության կենտրոններ, գյուղական բժշկական ամբուլատորիաներ, ընտանեկան բժշկի գրասենյակներ) և դրանց կազմում գործող 620 բուժակ-մանկաբարձական կետեր:

16. Համայքային տեղակայման բժշկական կազմակերպությունների զգալի մասը մարզպետարանների ենթակայության տակ են և դրանց միայն մի մասն է ուղղակիորեն կառավարվում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից (շուրջ 20%):

17. ԱԱՊ ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպությունների կողմից բնակչության սպասարկումն իրականացվում է ինչպես բուժհաստատություններում, այնպես էլ տնային այցերի ձևով:

18. Ընտանիք այցելելու ինստիտուցիոնալ մեխանիզմը հնարավորություն է տալիս բուժաշխատողին առավելագույնս մոտ լինել ընտանիքի առողջապահական խնդիրներին, գնահատել ընտանիքի նաև սոցիալական և կրթական կարիքները:

19. Սոցիալական ոլորտի հիմնական բաղադրիչն է կրթությունը: Երեխաների կրթության ապահովման իրավունքը երաշխավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով, ինչպես նաև մի շարք միջազգային փաստաթղթերով: Երեխաների կրթության իրավունքի ապահովումը «Երեխայի իրավունքների մասին» միջազգային կոնվենցիայի և «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի հիմնական դրույթներից մեկն է:

20. Հայաստանում հանրակրթությունն իրականացվում է տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական դպրոցներում, որոնց մեծ մասը գործում է մարզային ենթակայությամբ: Հանրապետությունում գործում են նաև փոքրաթիվ ոչ պետական հանրակրթական հաստատություններ՝ վճարովի հիմունքներով:

21. Կրթության ոլորտում կառավարության առաջնահերթություններից մեկն է բոլոր երեխաների համար ապահովել որակյալ կրթության մատչելիությունը՝ շարունակաբար բարելավելով համակարգի գործունեության արդյունավետությունը:

22. Եթե կրթության որակի և արդյունավետության խնդիրները հանդիսանում են գլխավորապես կրթության կառավարման մարմինների պատասխանատվությունը, ապա կրթության մատչելիությունը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, որոնց զգալի մասը դուրս են կրթության համակարգից և առնչվում են ընտանիքին, համայնքին, սոցիալական պաշտպանության և առողջապահության, երբեմն նաև իրավապահ մարմինների գործունեության ոլորտներին:

23. Հետևաբար, բոլոր երեխաների համար հանրակրթության մատչելիության ապահովումը դուրս է մեկ գերատեսչության պատասխանատվության շրջանակներից և պահանջում է բոլոր շահագրգիռ կառույցների սերտ համագործակցությունը:

24. Խնդրին միանշանակ գնահատական ներկայումս հնարավոր չէ տալ, քանի որ այն համակողմանի ուսումնասիրված չէ և չկա դպրոցից դուրս մնացած երեխաների հայտնաբերման, հաշվառման և ուղղորդման գործուն մեխանիզմ:

25. Մի շարք հետազոտություններ ցույց են տվել, որ դպրոց չհաճախելու հիմնական կանխորոշող գործոններն են հաշմանդամությունը և ընտանիքի ծանր սոցիալական վիճակը:

26. Հիմնական ընդհանուր կրթության պարտադիր լինելու պահանջն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ (ՀՀ Սահմանադրություն, հոդված 39), ՀՀ «Կրթության մասին» (հոդված 18) օրենքով, իսկ «Հանրակրթության մասին» (հոդված 16) օրենքով սահմանված է պարտադիր կրթության ապահովման պատասխանատվությունը: Նշված պատասխանատվությունը կիսվում է տարբեր դերակատարների միջև, մասնավորապես.

1) դպրոցական տարիքի երեխային ուսումնական հաստատություն ընդգրկելու համար պատասխանատու է ծնողը՝ օրենքով սահմանված կարգով,

2) կրթության և գիտության նախարարությունը պետք է սահմանի դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու կարգը,

3) տարածքային կառավարման մարմինները և Երևանի քաղաքապետը համակարգում և վերահսկում են իրենց տարածքում դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում նրանց ընդգրկումը ուսումնական հաստատություն,

4) տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություն:

27. Համաձայն ՀՀ «Ընտանեկան օրենսգրքի» երեխայի իրավունքների և շահերի խախտման դեպքում (մասնավորապես՝ ծնողների կողմից երեխային դաստիարակելու, կրթության տալու պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում, հոդված 43, մաս 2), երեխայի իրավունքների պաշտպանության համար պատասխանատու է խնամակալության և հոգաբարձության մարմինը՝ այն է տեղական ինքնակառավարման մարմինը:

28. Սակայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում արտացոլված չեն տեղական ինքնակառավարման մարմնի այդ պարտականության իրականացման մեխանիզմները: Ընդ որում այդ պարտականության իրականացման մեխանիզմներ նախատեսված չեն նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. փետրվարի 24-ի N 164-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության մեջ:

29. Մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության բաժնի (այսուհետ ԸԿԵՊ) կանոնադրության մեջ առկա է գործառույթ՝ իրականացնել հանրակրթությունից դուրս մնացած, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական իրավունքի պաշտպանությունը՝ նրանց ներգրավելով հանրակրթական (հատուկ հանրակրթական) ուսումնական հաստատություններում, սակայն նկարագրված չեն մեխանիզմներ և բաժինների ինստիտուցիոնալ կարողությունները չեն բավականացնում այդ գործառույթը լիովին իրականացնելու համար:

30. Գործող օրենսդրության համաձայն սոցիալական պաշտպանության ծառայությունների տրամադրման տեսանկյունից բնակչությունը բաժանվում է սոցիալական խմբերի՝ աղքատներ, հաշմանդամներ, բազմազավակ ընտանիքներ, միաձնող ընտանիքներ, միայնակ ծերեր, ծնողազուրկ երեխաներ, գործազուրկներ, կենսաթոշակառուներ և այլն, առանց հաշվի առնելու նշված խմբերի զուգակցումը միևնույն ընտանիքում:

31. Նույն համատեքստում սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություններն են բաժանվում՝ ըստ տրամադրվող սոցիալական ծառայության տեսակի՝ զբաղվածության կենտրոններ, սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններ, սոցիալական ապահովության ծառայության տարածքային բաժիններ, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններ, սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններ, ԲՍՓՀ, ՀՀ մարզպետարանների ստորաբաժանումներ, ՀԿ սեկտոր և այլն, որոնք կարող են

միաժամանակ տարբեր ծառայություններ կամ անգամ նույն ծառայությունը՝ տրամադրել նույն ընտանիքի տարբեր անդամներին կամ մինչև անգամ նույն անձին:

32. Տարածքային մակարդակում գործում են ՀՀ մարզպետարանների աշխատակազմերի սոցիալական հարցերի իրավասություններ ունեցող՝ առողջապահության և սոցիալական ապահովության, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության, կրթության, մշակույթի և սպորտի, զարգացման ծրագրերի և վերլուծության, տեղական ինքնակառավարման հարցերով զբաղվող ստորաբաժանումները, որոնցից յուրաքանչյուրն ըստ ոլորտի, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պետական ծրագրերի իրականացման, ապահովման գործառույթներին զուգահեռ՝

1) վերահսկում է մարզի տարածքում ոչ պետական մշակութային և սպորտային կազմակերպությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրությանը.

2) համագործակցում են մարզի տարածքում գործող պետական գրանցում ունեցող կրոնական կազմակերպությունների հետ.

3) վերահսկում է ոչ պետական առողջապահական հաստատությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրությանը.

4) վերահսկում է մարզի տարածքում սոցիալական ապահովության ոչ պետական կազմակերպությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրությանը.

5) աջակցում է սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների գործունեությանը.

6) համագործակցում է բնապահպանական խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիների հետ:

33. ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունն իր գործունեության ընթացքում ուղղակիորեն առնչվում է սոցիալական խնդիրներ ունեցող ընտանիքների հետ, մասնավորապես անաչափահասների գծով բաժինները և համայնքային ոստիկանությունը:

34. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով որպես սկզբունք է սահմանվում ոստիկանության համագործակցությունը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման, այլ իրավապահ մարմինների, ինչպես նաև իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանց հետ:

35. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը սահմանում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև քաղաքացիների ոստիկանությանն աջակցելու հնարավորությունը:

36. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանվում է նաև անչափահասների կողմից կատարվող հանցագործությունները կանխելու և նրանց վերադաստիարակելու ուղղությամբ կատարվող միջոցառումների ընթացքում համագործակցությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Հոդվածն անդրադառնում է նաև ոստիկանության պարտավորությանը՝ աջակցելու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական կազմակերպություններին՝ իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս:

37. Միջգերատեսչական համագործակցությունն այս մակարդակում գործնականում սահմանափակվում է եզակի և հրատապ դեպքերի կապակցությամբ խնդրի համատեղ լուծման գործընթացներով՝ որպես աշխատողների բարի կամքի դրսևորում, իսկ երբեմն պայմանավորվածությունների ձեռք բերումը կատարվում է հանրապետական գործադիր մարմինների մակարդակում:

**IV. Համագործակցության շահառուները**

38. Հայաստանի Հանրապետությունում սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտի մարզային և համայնքային մակարդակներում շահառուները (դերակատարները) տարբեր են:

39. Պետական կառավարման մարմինները հիմնականում մարզային և տարածքային մակարդակներում են՝ մարզպետները, մարզպետարանների առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունները, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները, կրթության, մշակույթի և սպորտի վարչությունները, սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային ստորաբաժանումները, սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունները (բաժինները), զբաղվածության պետական ծառայության տարածքային կենտրոնները, ոստիկանության համապատասխան ստորաբաժանումները և այլն:

40. Համայնքային մակարդակում տեղական ինքնակառավարման մարմինները, սոցիալական ծառայությունների տարածքային բաժինները (թվով 5 քաղաքային համայնքներում պատվիրակված լիազորություն), առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) ծառայություններ մատուցող բժշկական հաստատություններ, բժշկական կազմակերպություններ՝ ԱԱՊ կենտրոններ, գյուղական առողջության կենտրոններ, գյուղական բժշկական ամբուլատորիաներ, ընտանեկան բժշկի գրասենյակներ և դրանց կազմում գործող բուժակ-մանկաբարձական կետեր:

41. Գործում են նաև այլ կազմակերպական-իրավական ձև ունեցող կազմակերպություններ՝ բժշկական կենտրոններ, դպրոցներ, մանկապարտեզներ, քաղաքացիական հասարակության տարբեր սուբյեկտներ:

**Աղյուսակ 1. Սոցիալական ծառայությունների մատուցումն ըստ կառավարման մակարդակների**

Ոլորտ	Կառավարման մակարդակ		
	Տեղական ինքնակառավարում	Տարածքային կառավարում	Պետական կառավարում
Կրթություն	- Նախադպրոցական - Հիմնական (Երևան) - Հատուկ դպրոց (3 Երևան) - Արտադպրոցական	- կրթության վարչություն - Հիմնական - Հատուկ դպրոց (10) - Արտադպրոցական	- Հատուկ դպրոց - Ավագ դպրոց - Մասնագիտացված դպրոց - Արտադպրոցական

Առողջապահություն	<ul style="list-style-type: none"> <li>- Ամբուլատորիա</li> <li>- Առողջության առաջնային պահպանման կենտրոն</li> <li>- Գյուղական առողջության պահպանման կենտրոն</li> <li>- բուժակ-մանկաբարձական կետ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Հիվանդանոց</li> <li>- Պոլիկլինիկա</li> <li>- Ամբուլատորիա առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Դիսպանսեր և պոլիկլինիկա</li> <li>- Մասնագիտացված բժշկական կենտրոն</li> </ul>
Սոցիալական պաշտպանություն	<ul style="list-style-type: none"> <li>- Ինամակալության և հոգաբարձության մարմին</li> <li>-ՍԾՏԲ- 5 համայնքում 17 ՍԾՏԲ (համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորություն)</li> <li>- կամավոր լիազորություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին</li> <li>- առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն</li> <li>- ՍԾՏԳ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>-Մանկատուն</li> <li>-Գիշերօթիկ հաստատություն</li> <li>- Տուն ինտերնատ</li> <li>-ՍԱՊԾ տարածքային բաժիններ</li> <li>-Զբաղվածության պետական ծառայություն- տարածքային կենտրոն</li> <li>- Բժշկա-սոցիալական փորձաքննության գործակալություն-ԲՍՓՀ</li> </ul>

42. Սոցիալական ծառայություն մատուցող կազմակերպությունների բազմազանությունն իր ազդեցությունն է ունենում նշված շահառուների միջև համագործակցության հաստատման և իրականացման վրա:

43. Սոցիալական ծառայությունների մատուցման մակարդակում հայտնի է համագործակցության երեք հիմնական մեխանիզմ՝

- 1) տեղեկատվության փոխանակում,
- 2) ուղղորդում,
- 3) համատեղ գործունեություն:

44. Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրմամբ՝ անցում կատարելով մարդակենտրոն սոցիալական քաղաքականության և սոցիալական աշխատանքի ժամանակակից՝ սոցիալական դեպքի վարման, մեթոդաբանությանը, զգալիորեն ավելանալու է սոցիալական պաշտպանության ոչ միայն հասցեականությունն, այլ լուծում են ստանալու բնակչության սոցիալապես խոցելի խավերի բազմաթիվ խնդիրներ:

45. Սոցիալական դեպքի վարման մեթոդաբանության առանցքում դրված է անհատին շրջապատող սոցիալական ցանցի գաղափարը, դրա անդամների համատեղ ուժերով խնդիրների լուծման մեխանիզմը: Ընդ որում անդամները կարող են լինել ինչպես անհատ անձինք (ազգական, բարեկամ, ընկերներ, հարևան և այլն), այնպես էլ սոցիալական ոլորտում գործող տարատեսակ կազմակերպություններ՝ անկախ դրանց կազմակերպական իրավական ձևից: Վերջիններիս մասնակցությունը դառնում է իրական և արդյունավետ միայն համագործակցության հստակ մեխանիզմների առկայության պայմաններում:

46. Հաշվի առնելով, որ սոցիալական ծառայությունների մատուցման առանցքում գտնվում է մարդը և շատ հաճախ տարբեր սոցիալական ծառայություններ տարբեր կառույցների կողմից մատուցվում են միևնույն անհատին կամ անհատների խմբերին, ապա դրանց միջև, ծառայության մատուցման ընթացքում, կապի խզումը և տեղեկատվության չտրամադրումը բերում է ակնկալվող արդյունքների նվազեցման կամ դրանց իսպառ բացակայության: Ասվածը վերաբերում է ինչպես



կառավարման տարբեր մակարդակներում, այնպես էլ մեկ մակարդակում գտնվող, սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություններին:

47. Միջազգային պրակտիկայում համագործակցությունն իրականացվում է տարբեր ձևաչափերով և հիմնականում պայմանավորված է ծառայությունների մատուցման ապակենտրոնացման մակարդակի աստիճանով: Հիմնականում կիրառվում են այսպես կոչված համագործակցության համաձայնագրերը և միջգերատեսչական կանոնակարգերը:

48. Համագործակցությունը, որը ծրագրերի և միջոցառումների «արդյունքի» նախապայման է, անհրաժեշտ է ինչպես կառավարման ազգային ու տարածքային, այնպես էլ համայնքային մակարդակներում: Ասվածի համատեքստում վերջինս առավել կարևորվում է համայնքային մակարդակում, քանի որ սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների հայտնաբերումը, նրանց ընտանիքների կարիքների վեր հանումը և դրանց հնարավոր լուծման գործընթացն անհնար է պատկերացնել առանց սոցիալական, առողջապահական և կրթական ոլորտների ենթակառուցվածքների արդյունավետ համագործակցության:

49. Սոցիալական համագործակցության ռազմավարական հիմնական ուղղությունները, ինստիտուցիոնալացման մեխանիզմները և ձևերը 2014թ. ընթացքում քննարկվել են Հայաստանի Հանրապետության Լոռու, Շիրակի, Տավուշի և Գեղարքունիքի մարզերի սոցիալական համագործակցության շահառու մարմինների և կառույցների հետ, ապա 2015թ. ապրիլի 9-ին ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ Երևանում կազմակերպվել է «Սոցիալական ծառայությունների համագործակցության ինստիտուցիոնալացում» թեմայով կլորսեղան քննարկում, որին մասնակցել են շահագրգիռ բոլոր կողմերը՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի, տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների, արդարադատության, կրթության և գիտության, առողջապահության նախարարությունների, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության, Երևանի քաղաքապետարանի, Հայաստանի Հանրապետության Լոռու, Շիրակի, Տավուշի և Գեղարքունիքի մարզապետարանների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

50. Սոցիալական համագործակցության ռազմավարական ուղղությունները և կազմակերպման ձևերն ընտրվել են համագործակցության շահառուների հետ համատեղ քննարկումների արդյունքների հաշվառմամբ:

### ***V. Սոցիալական համագործակցության հիմնական ձևերը***

51. Սոցիալական համագործակցության ռազմավարական ուղղություններից մեկը՝ տարբեր ենթակայություն ունեցող կազմակերպությունների միջև տեղեկությունների փոխանակումն է.

1) Կազմակերպություններից որևէ մեկի տիրույթում հայտնված որևէ տեղեկությունը, որն առնչվում է այլ օղակի, այն որոշակի ժամանակահատվածում և որոշակի կապի միջոցներով պետք է ուղարկվի/տրամադրվի/փոխանցվի այդ օղակին:

2) կարևոր է տեղեկությունների փոխանցման (փոխանակման) ժամկետը, որը պայմանավորված է խնդրի սրությամբ և արձագանքի հետաձգման հնարավոր հետևանքներով: Օրինակ, երբ արձագանքի հետաձգումը կարող է սպառնալ

անհատի կյանքին կամ առողջությանը, ապա այն պետք է փոխանցվի հնարավորինս կարճ ժամանակահատվածում: Տեղեկության անհետաձգելի փոխանցման տիպային օրինակներից է բռնության կամ դրա կիրառման ռիսկի մասին տեղեկությունը:

3) տեղեկությունների գերժանրաբեռնման պայմաններում հարկավոր է հստակ տարբերակել պարզապես օգտակար տեղեկությունն այն տեղեկությունից, որի ստացումից հետո կանխատեսվում է այդ ուղղությամբ ծրագրել որոշակի գործողություններ: Տեղեկության փոխանակման (փոխանցման) ժամանակ կարևոր է ոչ միայն փոխանցել տեղեկությունը համապատասխան օղակին այլ նաև հավաստիանալ, որ այն հասել է հասցեատիրոջը:

52. Սոցիալական համագործակցության ժամանակ ըստ էության համագործակցող կողմերին հայտնի են դառնում որևէ աջակցություն ակնկալող անձի անձնական տվյալները, որոնց գաղտնիությունը երաշխավարվում է ՀՀ օրենքներով՝

1) սոցիալական համագործակցության ընթացքում տեղեկությունների փոխանակումը կամ համագործակցության ընթացքում հայտնի դարձած տվյալներն ունեն խորհրդապահական բնույթ: Այդ հարցերը կարգավորվում են հիմնականում երկու օրենքներով՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքներ:

2) «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը կարգավորում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անձնական տվյալների մշակմանն առնչվող հարաբերությունները:

3) «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, այն սահմանում է տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, տեղեկություններ ստանալու կարգը, ձևերը և պայմանները, տարածվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց վրա:

4) երկու օրենքներն էլ սահմանում են տեղեկատվության փոխանակման (ազատության) սահմանափակումները, այն է, առանց մարդու համաձայնության այդ տվյալը փոխանցել այլ անձի կամ կազմակերպության արգելվում է, եթե, իհարկե, այդ տվյալը չի վերաբերում քաղաքացիների անվտանգությանը և առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաև տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին և դրանց հետևանքներին,

5) տեղեկատվության հաղորդման մեխանիզմը պետք է ենթադրի էլեկտրոնային տեխնոլոգիաների, կապի ժամանակակից հնարավոր միջոցների կիրառում, իսկ տեղեկատվության հաղորդման ցանկալի ռեժիմը՝ առցանց, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կամ թղթային առաքում:

53. Սոցիալական համագործակցության ձևերից հաջորդն՝ ուղղորդումն է: Դրա անհրաժեշտությունն ի հայտ է գալիս, երբ անհատը, կամա թե ակամա, հայտնվում է սխալ հասցեատեղում կամ այդ հասցեատեղն իր խնդրի ամբողջական լուծման հանգրվանը չէ: Ուղղորդումը նույնպես պահանջում է հավաստիացում առ այն, որ ուղղորդվողը «հասել է» ճիշտ հասցեատիրոջը: Ուղղորդումն արդիական գործառույթ

է, քանի որ ծառայություններ մատուցող օղակները հիմնականում լավատեղյակ են միմյանց գործառույթներից, առնվազն դրանց տեղեկացվածության աստիճանը ավելի մեծ է քան անհատներինը:

54. Համագործակցության առավել արդյունավետ ձևը համատեղ գործունեության իրականացումն է: Այն կարող է արտահայտվել ոչ ֆորմալ՝ պարզապես համակարգման և «ֆորմալ» պայմանագրի կամ համաձայնագրի կամ իրավական ակտի տեսքով: Համատեղ գործունեության հիմնական շարժառիթն անհատի խնդրին առավել արդյունավետ լուծում տալն է: Կազմակերպությունների միջև համատեղ գործունեությունն իրականություն դառնալու համար անհրաժեշտ է, որ դրա կիրառողներն ունենան որոշումներ կայացնելու որոշակի ինքնուրույնություն:

55. Սակայն, որոշակի սահմաններով ինքնուրույնության առկայությունը չի բերում համատեղ գործողությունների, քանի որ համատեղ աշխատելու երևույթը նաև պայմանավորված է աշխատառճով և ձևավորված ավանդույթներով: Խիստ ուղղահայաց համակարգերում, համատեղ գործունեությունը հազվադեպ է կիրառվում, այն ավելի շատ հատուկ է ապակենտրոնացված և որոշակի անկախության աստիճան ունեցող համակարգերին:

56. Այսպիսով փաստացի պարտադրված համագործակցությունը ներկայումս իրականացվում է համապատասխան կառույցների մասնագետների բարի կամքի դրսևորման պարագայում: Սույն հանգամանքը, ցավոք, միշտ չէ, որ գործում է և արդյունքում անհրաժեշտություն է առաջանում ձևայնացնել այդ հարաբերությունները:

57. Ընդ որում, դրանք պետք է վերաբերեն ողջ գործընթացին, այն է՝ սոցիալական դեպքի հայտնաբերումից, դրա մասին համապատասխան մարմնին հաղորդում տրամադրելուց՝ մինչև համապատասխան սոցիալական ծառայությունների (բժշկական, կրթական, թե սոցիալական պաշտպանության) տրամադրման մասին որոշումների կայացումը և մատուցումը:

## ***VI. Առաջարկվող լուծումները և դրանց նկարագրությունը***

58. Միջազգային պրակտիկայում կիրառվում են համագործակցության ուղղահայաց, հորիզոնական կամ խառը մոդելները:

59. Համագործակցության հորիզոնական մոդելը սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների միջև համագործակցության իրականացումն է համագործակցության համաձայնագրերի (պրոտոկոլ) միջոցով:

60. Այս ձևաչափով աշխատելու պարագայում, սոցիալական ծառայություն տրամադրող յուրաքանչյուր կազմակերպություն հանդիսանում է համաձայնագրի կողմ և ստանձնում համաձայնագրով սահմանված իրավունքներն ու պարտականությունները:

61. Համաձայնագրային ձևաչափով համագործակցության իրականացումը լայն տարածում ունի միջազգային պրակտիկայում, հատկապես արևմտյան Եվրոպայի երկրներում: Այն դարձել է գործուն մեխանիզմ, քանի որ սոցիալական ծառայություն տրամադրող կազմակերպությունները բավականին ինքնուրույն են գործում: Ընդ որում, ինքնուրույնությունը տարածվում է նաև ֆինանսական միջոցների տնօրինմանը և ստանձնած արդյունքներին հասնելու ճկունությանը:

62. Համաձայնագիրը հիմնված է կամավորության սկզբունքի վրա և ենթադրում է համագործակցող կազմակերպությունների առջև ծառայած խնդիրների լուծման, ընդհանուր նպատակների գիտակցման բարձր մակարդակ: Այն լավագույն ձևաչափն է տեղական առանձնահատկությունները բացահայտելու տեսանկյունից:

63. Համաձայնագրերի ներդրման հիմնական խոչընդոտ են հանդիսանում մի կողմից այդ ձևաչափով աշխատելու փորձի և աշխատառճի բացկայությունը, մյուս կողմից՝ սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների «ուղղահայաց» գործելակերպը:

64. Ներկայումս սոցիալական ծառայություն մատուցող կազմակերպությունն ավելի շատ դիտարկվում է որպես զուտ իրականացնող օղակ, այն էլ բավականին սահմանափակ լիազորություններով: Սակայն, ինքնուրույն համագործակցելու լիազորությունը սահմանափակված չէ օրենսդրությամբ: Հիմնական խոչընդոտն ինտերցիոն բնույթ ունեցող աշխատառճն է, որը ստիպում է սոցիալական ծառայություն մատուցող կազմակերպություններին պատասխանատվության առումով պասիվ դիրքում գտնվել:

65. Եթե մինչ այժմ Հայաստանում կազմակերպությունների միջև համագործակցության խթանումը համաձայնագրային ձևաչափով այդքան էլ իրատեսական չէր դիտվում, ապա ներկայումս կամավոր սկզբունքով համագործակցության համաձայնագրերի ինստիտուտի ներդրումը հնարավոր իրատեսական է, քանի որ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանվել է «սոցիալական համագործակցության համաձայնագիր հասկացությունը», հստակեցվել են համաձայնագրի կողմերի իրավունքներն ու փոխադարձ պարտավորությունները:

66. Համագործակցության ուղղահայաց մոդելի հիմքում ընկած է կազմակերպությունների միջև փոխհարաբերությունների՝ ներառյալ համագործակցության, հստակ կարգավորված՝ կարգերը և ընթացակարգերը (այսուհետ՝ կանոնակարգ, ռեգլամենտ), որոնք ձևակերպվում են համապատասխան օրենսդրական ակտերով, որոնք տվյալ կազմակերպության աշխատանքը կարգավորող պարտադիր նկարագրի մաս են կազմում:

67. Կանոնակարգը հնարավորինս մանրամասն նկարագրում է համագործակցության դեպքերը և քայլերի հստակ նկարագիրը, ընձեռելով համագործակցող կողմերին նաև որոշ ինքնուրույնության դրսևորման հնարավորություն:

68. Կիրառելիության տեսանկյունից կանոնակարգը շատ հարմար է տեղեկատվության փոխանակման և ուղղորդման դեպքերի համար:

69. Կանոնակարգը դժվար կիրառելի է համատեղ գործունեության դեպքերի համար, քանի որ առկա է թե՛ դեպքերի և թե՛ դերակատարների բազմազանություն, որը հնարավոր չէ նկարագրել և մանրամասն սահմանել օրենսդրական ակտերով:

70. Կանոնակարգի նման փաստաթղթերը պարտադիր կիրառելի են պետական կառույցների համար, սակայն համայնքային ենթակայության կամ ոչ առևտրային կազմակերպությունների համար այն բավարար չէ:

71. Եթե համայնքների պարագայում այն օրենքի կամ առնվազն կառավարության որոշման մակարդակ ունենալու պարագայում ընդունելի է, ապա ոչ առևտրային կազմակերպությունների համար, որոնք ներգրավված են սոցիալական

ծառայությունների մատուցման գործընթացում, նշված կարգերի կիրառումը լինելու է կամավոր և համաձայնությամբ:

72. Սոցիալական ոլորտը (կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն) կարգավորող օրենսդրության մեջ բազմաթիվ հոդվածներ ուղղակի սահմանում են համագործակցությունը, սակայն դրանցից և ոչ մեկը դրա իրականացման մեխանիզմը չի սահմանում:

73. Պարտադիր սկզբունքով՝ կանոնակարգով, համագործակցության ներդրումը հնարավոր կլինի իրականացնել եթե՝

1) համագործակցության իրականացումը հստակ նկարագրվի և իրավական ձևակերպում ստանա.

2) սահմանափակվի հիմնականում ուղղորդման և տեղեկատվության փոխանակման վերաբերյալ դեպքերով.

3) արտացոլվի համապատասխան կազմակերպությունների աշխատողների աշխատանքային նկարագրում.

4) կիրառվեն ինչպես խրախուսման, այնպես էլ վերահսկողության ու չկատարման դեպքերում պատժամիջոցների մեխանիզմները:

74. Հաշվի առնելով ուղղահայաց և հորիզոնական մոդելների սահմանափակումները, համագործակցության ամբողջական սպեկտրը ծածկելու տեսանկյունից, խառը մոդելը ենթադրում է դրանց համատեղ կիրառումը:

75. Այսպես, ուղղորդման և տեղեկատվության փոխանակման վերաբերյալ համագործակցության դեպքերն առաջարկվում է կարգավորել հիմնականում կանոնակարգով: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով կազմակերպությունների միջև համատեղ գործունեության բազմազանությունը՝ առաջարկվում է խթանել համագործակցությունը՝ համաձայնագրերի միջոցով:

76. Կանոնակարգը (ուղղահայաց մոդել) պարտադիր է կիրառման այն կազմակերպությունների համար, որոնք ունեն պետական կամ մասամբ համայնքային ենթակայություն կամ սոցիալական ծառայություններ են տրամադրում պետական ֆինանսավորմամբ՝ պայմանագրային հիմունքներով:

77. Միևնույն ժամանակ, համագործակցության համաձայնագիրը հանդիսանում է կամավորության սզբունքով աշխատող ձևաչափ: Կայուն արդյունավետության տեսանկյունից համագործակցության կամավոր ձևաչափերը և ընդհանրապես կամավորության սկզբունքով աշխատող գործընթացներն առավել նախընտրելի են, եթե դրանք հիմնված են լավագույն արդյունքներ ապահովելու համատեղ մոտիվացիայի վրա: Այս հանգամանքը պարզապես ուղղակի «դրդում է» կողմերին կիրառել լավագույն մեխանիզմները:

## ***VII. Սոցիալական համագործակցության ռազմավարական ուղղությունները***

78. Այսպիսով, առաջարկվող լուծումը ենթադրում է, այսպես կոչված խառը մոդելի, կիրառումը՝ իրավահարաբերությունների կարգավորում օրենսդրության և համաձայնագրերի միջոցով:

79. Սոցիալական ոլորտում ինստիտուցիոնալ համագործակցության առաջարկվող ռազմավարական ուղղությունները հետևյալն են՝

1) Սոցիալական համագործակցության համաձայնագրերի կնքում՝ սոցիալական ոլորտի համար պատասխանատու կառավարման ազգային և տարածքային մարմինների և սոցիալական ծառայություններ մատուցող այլ սուբյեկտների միջև.

ա. ազգային մակարդակում համաձայնագիրն ապահովելու է սոցիալական քաղաքականության մշակման, իրականացման և մոնիտորինգի մասնակցային գործընթաց.

բ. մարզում՝ տարածաշրջանային (նախկին շրջանային) մակարդակում համաձայնագիր, որին պետք է միանան սոցիալական ծառայություն տրամադրող պետական կազմակերպությունները (այդ թվում՝ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումները), կարող են միանալ ոչ առևտրային կազմակերպությունները, համայնքները, ինչպես նաև կամավոր անձինք՝ ապահովելով սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի արդյունավետության (հասցեականություն, մատչելիություն, որակ) բարձրացում.

գ. համայնքային մակարդակում՝ համակարգող մարմինների ստեղծում՝ համայնքի բժշկական, կրթական հաստատությունների պատասխանատուների, սոցիալական աշխատողի, համայնքում բարի համբավ ունեցող այլ անձանց ներգրավմամբ (օրինակ՝ համայնքի ղեկավարին կից և համաձայնությամբ).

դ. ազգային և տարածաշրջանային մակարդակում անհրաժեշտ է ձևավորել համագործակցությունը համակարգող խորհուրդ, որի աշխատանքները համապատասխանաբար կազմակերպելու են ազգային մակարդակում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմը, իսկ տարածաշրջանային մակարդակում՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալությունները (բաժինները), ընդ որում սոցիալական համագործակցության համաձայնագրի օրինակելի ձևը, ընդունման ընթացակարգը, ինչպես նաև համակարգող խորհրդի ձևավորման և խորհրդի աշխատակարգը կհաստատվի Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով:

2) միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգի հաստատում ՀՀ կառավարության որոշմամբ, որը սահմանելու է սոցիալական ծառայություններ տրամադրող պետական մարմինների և կազմակերպությունների կողմից իրականացվելիք խնդրահարույց դեպքերի հայտնաբերման գործողությունները, տեղեկության փոխանցման (փոխանակման) ժամկետները, ուղղորդման, ինչպես նաև մոնիտորինգի մեխանիզմները:

3) սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների) աշխատողների կողմից սոցիալական դեպքի վարման շրջանակներում անհատական աջակցող ցանցի՝ տարբեր կազմակերպությունների մասնագետներից կազմված (բազմամասնագիտական) խմբի ձևավորում, համատեղ աշխատանքի կազմակերպում՝

ա. սոցիալական դեպքերի վերաբերյալ տվյալների հավաքագրումը և հաղորդումը, անձնական տվյալների բազայի ստեղծումը (արդիականացումը), որում ներառվելու են սոցիալական կարիքների ողջ սպեկտրը, դրանց լուծման առկա ռեսուրսները և դրանց հաշվարկելի կարիքը.

բ. սոցիալական դեպքի վարման շրջանակներում ձևավորված աջակցող ցանցի տվյալների հավաքագրումը, տեղեկատվական շտեմարանում դրանց ներառումը

հնարավորություն է տալիս ձևավորել սոցիալական ոլորտում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների ռեգիստրը:

## **VII. Սոցիալական համագործակցության ինստիտուցիոնալացման կատարողական ցուցանիշները, մոնիտորինգը և իրականացման ռիսկերը**

80. Սոցիալական համագործակցության ռազմավարական հիմնական ուղղությունների և կազմակերպման ձևերի ներդրման ցուցանիշը համապատասխան իրավական դաշտի ձևավորումն է:

81. Սոցիալական համագործակցության ինստիտուցիոնալացումն ապահովող հիմնական իրավական դաշտը ձևավորված կլինի մինչև 2015 թվականի սեպտեմբեր ամիսը:

82. Սոցիալական համագործակցության շահառու յուրաքանչյուր մարմին կամ կազմակերպություն սոցիալական համագործակցության կազմակերպման և (կամ) իրականացման համար սահմանելու է ներքին ընթացակարգեր:

83. Սոցիալական համագործակցության կազմակերպման գործընթացի մոնիտորինգն իրականացնելու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ գնահատելով ընթացիկ ցուցանիշները (սոցիալական համագործակցության համաձայնագրերի առկայություն, աջակցող ցանցի ձևավորում և այլն), ինչպես նաև վերհանելով ռիսկերը:

84. Սոցիալական համագործակցության ռիսկերը կարող են լինել շահառու մարմիններում կամ կազմակերպություններում ներքին ընթացակարգերի բացակայությունը կամ թերի լինելը կամ անձնակազմի կողմից նոր աշխատառճին չանցնելը (վերապատրաստումների ոչ բավարար քանակ և մակարդակ):

Հավելված N 2  
 ՀՀ կառավարության 2015 թ.  
 օգոստոսի 31-ի նիստի N 40  
 արձանագրային որոշման

**Ց Ա Ն Կ**

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ՝ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ  
 ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

NN ը/Կ	Իրականացվելիք գործողության անվանումը	պատասխանատու պետական կառավարման մարմնի անվանումը	Ժամկետը	Ֆինանսական ապահովման աղբյուրը
1.	«Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2015 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
2.	Ազգային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագիրը հաստատելու մասին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանի նախագծի մշակում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2015 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում: